Գործ թիվ ՎԴ/0440/05/15

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«09» դեկտեմբերի 2015թ. քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝

նախագահությամբ՝ դատավոր Ա. Հարությունյանի,
քարտուղարությամբ՝ Վ. Ստեփանյանի,

մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ Գևորգ Հայրապետյանի,

2015 թվականի նոյեմբերի 18-ին դատարանում դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (հասցե՝ քաղաք Երևան, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ), ներկայացուցիչ Գևորգ Հայրապետյան (հիմք՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահի կողմից 20.01.2015 թվականին տրված լիազորագիր) ընդդեմ Մեծամորի քաղաքապետարանի (Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չտրվելուն ուղղված գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 16.02.2015 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Մեծամորի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չտրվելուն ուղղված գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջներ՝ Մեծամորի քաղաքապետարանին հնգօրյա ժամկետում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 227-1 գրավոր հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը տրամադրելուն, Մեծամորի քաղաքապետարանի ոչ

իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կրած վնասները փոխհատուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին։

ՀՀ վարչական դատարանի 20.02.2015 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է։

Վկայակոչված որոշման դեմ հայցվորի կողմից տարված վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2015 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ մասնակի՝ Մեծամորի քաղաքապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով հայցադիմումի ընդունումը մերժելու մասով վերացվել է ՀՀ վարչական դատարանի 2015 թվականի փետրվարի 20-ի որոշումը։
ՀՀ վարչական դատարանի 27.05.2015 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ։

ՀՀ վարչական դատարանի 08.10.2015 թվականի որոշմամբ սույն վարչական գործը նշանակվել է դատաքննության։

Դատական ակտի հրապարակման օր է հայտարարվել 09.12.2015 թվականը։

Հայցվորի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.
Հայցվորը Դատարան ներկայացրած հայցադիմումով և դատական նիստերի ժամանակ հայտնել է հետևյալը՝

Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ԻԱԿ) 2014 թվականի հոկտեմբերի 31-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է Մեծամորի քաղաքապետարանին (այսուհետ՝ Քաղաքապետարան« Պատասխանող)՝ խնդրելով տեղեկություններ՝ Մեծամորի քաղաքապետի գործուղումների և Մեծամոր քաղաքում ասֆալտապատման աշխատանքների վերաբերյալ։ Քաղաքապետարանը հարցմանը չի պատասխանել։

2014 թվականի հոկտեմբերի 31-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը փոստային ծառայությամբ ուղարկված տեղեկություն ստանալու թիվ 227-1 գրավոր հարցմամբ (այսուհետ՝ հարցում) դիմել է Մեծամորի քաղաքապետարանին, որով քաղաքապետարանից խնդրել է տրամադրել հետևյալ տեղեկությունները.
Մեծամոր համայնքի ղեկավարի 2014 թվականի 1-ին կիսամյակի գործուղումների ցանկը և յուրաքանչյուր գործուղման համար համայնքային բյուջեից ծախսված գումարի չափը«
2014 թվականի 1-ին կիսամյակում Մեծամոր քաղաքում ասֆալտապատման աշխատանքների համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը«
Մեծամոր քաղաքում ասֆալտապատման աշխանքների իրականացման համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը։

Հարցումը Քաղաքապետարանին ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ին։ ԻԱԿ-ը Քաղաքապետարանից հարցման պատասխան չի ստացել։ Միաժամանակ, Հայցվորը ներկայացրել է հետևյալ իրավական հիմքերը։
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի

ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»։

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»։

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը։ Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը։

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի։»։

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի թիվ արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք։ Այդ իրավունքը ներառում է սեփական կարծիքն ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից»։

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք։ Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության, և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»։ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ տեղեկություն տնօրինող են այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինները։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝

1) դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները.
2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.
3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն

օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի»։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.
եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը»։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը« կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է« ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում« պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին« իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում արխիվի) գտնվելու վայրը« որն ունի փնտրվող տեղեկությունը»։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տեղեկատվություն տնօրինողը« բացառությամբ սույն հոդվածի 3-րդ սասում սահմանված դեպքերի« մերժում է տեղեկության տրամադրումը« եթե դա

1) պարունակում է պետական« ծառայողական« բանկային« առևտրային գաղտնիք.
2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը« այդ թվում նամակագրության« հեռախոսային խոսակցությունների« փոստային« հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական« նոտարական« փաստաբանական գաղտնիք).
5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները»։ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ« որոնց տրամադրումը ենթակա է մերժման« ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ»։շ

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը)« ինչպես նաև դրա բողոքարկման կարգը»։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ... տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն...»։

ՀՀ վարչական դատավության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան« եթե համարում է« որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով« գործողություններով կամ անեգործությամբ՝ 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները.. .»։

Հայցվորը միաժամանակ նշել է, որ Քաղաքապետարանն Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվեցիայով երաշխավորված և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում ամրագրված՝ տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքներն ապահովելու համար պարտավոր էր կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով կամ նույն հոդվածի 10-րդ մասով սահմանված գործողություններից որևէ մեկը« կամ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված գործողություններից որևէ մեկը« ընդ որում՝ Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով։

Ընդ որում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով կամ նույն հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերում խոսքը գնում է հայցվող տեղեկատվությունն ըստ էության տրամադրելու մասին, երբ ըստ Օրենքի Քաղաքապետարանը պարտավոր էր Օրենքով սահմանված ժամկետում կամ տրամադրել հարցմամբ խնդրվող տեղեկությունները և փաստաթղթերի պատճենները, կամ, հայցվող տեղեկությունները հրապարակված լինելու դեպքում տրամադրել տվյալ հրապարակման միջոցի« վայրի և ժամկետի մասին տեղեկությունը (հղում կատարել տեղեկատվության աղբյուրին)։

Իսկ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված գործողություններից որևէ մեկը« ընդ որում՝ Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, ասելով խոսքը գնում է հայցվող տեղեկատվության տրամադրումը մերժելու մասին« երբ ըստ Օրենքի Քաղաքապետարանը պարտավոր էր Օրենքով սահմանված ժամկետում Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում մերժել խնդրվող տեղեկությունները« կամ« եթե պահանջվող տեղեկության միայն մի մասն է պարունակում տվյալներ« որոնց տրամադրումը ենթակա է մերժման« ապա տեղեկություն տրամադրեր մնացած մասի վերաբերյալ« իսկ մնացած մասով մերժեր։ Ընդ որում« տեղեկատվության տրամադրումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով քաղաքապետարանը պետք է ներկայացներ գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքը՝ օրենքի համապատասխան նորմը« ինչպես նաև դրա բողոքարկման կարգը։

Քաղաքապետարանը չի կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով կամ նույն հոդվածի 10-րդ մասով կամ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված գործողություններից որևէ մեկը՝ այն է« ԻԱԿ-ի գրավոր հարցմանն ի պատասխան Օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրել գրավոր պատասխան կամ գրավոր մերժում՝ դրսևորած ա¬նգործությամբ (գործողությամբ) խախտել է Օրենքի վերոնշյալ հոդվածների պահանջները« ուստի Քաղաքապետարանի անգործությունը (անգորրծությունը) ոչ իրավաչափ է: Քաղաքապետարանն ԻԱԿ-ի կողմից տեղեկատվություն ստանալու հարցում ստանալուց հետո որևէ պատասխան չի տրամադրել՝ դրսևորած անգործությամբ /գործողությամբ/ խախտել է ԻԱԿ-¬ի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքները: Ելնելով վերոգրյալից՝ Հայցվորը խնդրել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չտրվելուն ուղղված գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչել:

Պատասխանողի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.
Դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված Պատասխանողը չի ներկայացել դատական նիստին և չի միջնորդել գործը քննել իր բացակայությամբ: Ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով՝ դատարանը որոշեց գործը քննել Պատասխանողի բացակայությամբ:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը
- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 31.10.2014 թվականի թիվ 227-ի 1 տեղեկատվություն ստանալու հարցմամբ՝ թիվ RR160929250AM պատվիրված նամակով, Մեծամորի քաղաքապետարանին խնդրել է տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝ Մեծամոր համայնքի ղեկավարի 2014 թվականի 1-ին կիսամյակի գործուղումների ցանկը և յուրաքանչյուր գործուղման համար համայնքային բյուջեից ծախսված գումարի չափը« 2014 թվականի 1-ին կիսամյակում Մեծամոր քաղաքում ասֆալտապատման աշխատանքների համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը« Մեծամոր քաղաքում ասֆալտապատման աշխանքների իրականացման համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը:
- Համաձայն «Հայփոստ» ՓԲ ընկերության 13.10.2015 թվականի գրության՝ Մեծամորի քաղաքապետարանին հասցեագրված թիվ RR160929250AM պատվիրված նամակը ք. Մեծամոր, «Հայփոստ» ՓԲ ընկերության Վաղարշապատի թիվ 0910 փոստային բաժանմունքում ստացվել է 04.11.2014 թվականին և արխիվային փաստաթղթերի հիման վրա նույն օրը հանձնվել է Մեծամորի քաղաքապետ Ռ. Գրիգորյանին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Լսելով Հայցվորի ներկայացուցչի բացատրությունը, վերլուծելով և գնահատելով գործով ձեռք բերված բոլոր ապացույցները, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզ¬մամբ՝ ՀՀ վարչական դատարանը գտնում է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Մեծամորի քաղաքապետարանի ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝
1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝
ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,
բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.
2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.
3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.
2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ
3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը։

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական արդարադատության համակարգում սահմանված է այնպիսի իրավական կարգավորում, որը երաշխավորում է անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումն ինչպես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունվող ոչ իրավաչափ վարչական և նորմատիվ ակտերի, այնպես էլ նրանց ոչ իրավաչափ գործողությունների և անգործության դեմ։

Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի շրջանակներում քննության առարկա կարող է դառնալ վարչական մարմնի կողմից կայացված այն վարչական ակտը, որը կորցրել է իր իրավաբանական ուժը, կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը։

Այսինքն՝ որպեսզի անձը կարողանա իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը նշված հայցի շրջանակներում՝ անհրաժեշտ է, որ վարչական ակտն արդեն իսկ ուժը կորցրած լինի, իսկ գործողությունը կամ անգործությունը, որը նա ցանկանում է ոչ իրավաչափ ճանաչել, պետք է իրեն սպառած լինի։

Տվյալ դեպքում Դատարան ներկայացված պահանջով Հայցվորը պահանջում է ոչ իրավաչափ ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ Մեծամորի քաղաքապետարանի՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան տրամադրելուն կապակցությամբ դրսևորած անգործությունը։

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք։

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից։

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք։

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ « Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք։ Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից»։

Վերոնշյալ դրույթների ուսումնասիրությունից հետևում է, որ Կոնվենցիոն և սահմանադրորեն ամրագրված դրույթներով Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, այդ թվում՝ խոսքի ազատության իրավունքի և այդ իրավունքի բովանդակային մասը կազմող տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության, ինչպես նաև իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ

առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքի պաշտպանությունը, ինչն ուղղակիորեն բխում է իրավական պետության սկզբունքից։

Տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները սահմանվում և տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, որի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա։

Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը»։

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը»։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները։

2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ։»։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը։

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ տեղեկություն փնտրելու և դա ստանալու նպատակով տեղեկատվություն տնօրինողին հասցեագրված դիմումը ստանալու պահից տեղեկություն տնօրինողի վրա օրենսդիրը դրել է որոշակի գործողությունների կատարման պարտականություն՝ սահմանելով նաև այդ գործողությունների կատարման պարտադիր առավելագույն ժամկետներ։ Այսինքն, տեղեկատվություն տնօրինողը տեղեկություն փնտրելու և դա ստանալու նպատակով իրեն հասցեագրված դիմումը ստանալու պահից սկսած օրենքով սահմանված ժամկետներում պարտավոր է կամ տրամադրել տեղեկությունը, հրապարակված լինելու դեպքում՝ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը, իսկ եթե տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք կամ առկա է տեղեկություն տրամադրելու մերժելու հիմքեր, գրավոր հայտնել լրացուցիչ աշխատանքներ կատարելու կամ տեղեկություն տրամադրելու մերժելու հիմքերի վերաբերյալ։

Մասնավորապես, գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չլինելու դեպքում դրա պատճենը, իսկ հրապարակված լինելու դեպքում՝ տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դրա տնօրինողը՝ վարչական մարմինը, պարտավոր է տեղեկություն փնտրողին տրամադրել 5-օրյա ժամկետում։ Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա դրա մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը։ Ընդ որում, գրավոր հարցմամբ փնտրվող տեղեկության տրամադրելը հետաձգելու դեպքում օրենսդիրը սահմանել է առավելագույն ժամկետ, այն է՝ դիմումը (գրավոր հարցումը) ստանալու պահից 30 օր։ Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայցվորը 31.10.2014 թվականի թիվ 227-ի 1 տեղեկատվություն ստանալու հարցմամբ Մեծամորի քաղաքապետարանին խնդրել է տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝ Մեծամոր համայնքի ղեկավարի 2014 թվականի 1-ին կիսամյակի գործուղումների ցանկը և յուրաքանչյուր գործուղման համար համայնքային բյուջեից ծախսված գումարի չափը« 2014 թվականի 1-ին կիսամյակում Մեծամոր քաղաքում ասֆալտապատման աշխատանքների համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը« Մեծամոր քաղաքում ասֆալտապատման աշխանքների իրականացման համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը։

Նշված հարցումը, համաձայն «Հայփոստ» ՓԲ ընկերության 13.10.2015 թվականի գրության, Մեծամորի քաղաքապետարանի կողմից ստացվել է 04.11.2014 թվականին, սակայն պատասխան չի տրամադրվել։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ ճանաչման հայցով ապացուցման բեռը կրում է՝ վարչական մարմինը՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի, ինչպես նաև որևէ կատարված գործողության կամ թույլ տրված անգործության իրավաչափությունը հիմնավորող փաստերի մասով։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը համարում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը։ Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պատասխան չներկայացնելը վարչական դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում։

Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Պատասխանողը, կրելով ապացուցման բեռը, չի ներկայացել դատական նիստերին և չի ներկայացրել սահմանված ժամկետում հարցմանը չպատասխանելու օրինական հիմք լինելու վերաբերյալ որևէ ապացույց։ Այսպիսով, Դատարանը գտնում է, որ Պատասխանողը 31.10.2014 թվականի թիվ 227-ի 1 տեղեկատվություն ստանալու հարցումը ստանալուց հետո պարտավոր էր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ և 10-րդ մասով և նույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներում կատարել նույն նորմերով սահմանված գործողությունները, որոնք չի կատարել։ Վերոգրյալ իրավակարգավորումների և սույն գործի փաստերի համադրման արդյունքում Դատարանը գտնում է, որ Մեծամորի քաղաքապետարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, ՀՀ Սահմանադրության և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ նորմերի պահանջների խախտմամբ դրսևորել է ոչ իրավաչափ անգործություն, որպիսի պայմաններում հայցը ենթակա է բավարարման։

Դատական ծախսերը

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած

դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար։ Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին։

Դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում դատական ծախսը բաղկացած է պետական տուրքից։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը բավարարվում է, Դատարանը գտնում է, որ Մեծամորի քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար։

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 123-127-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Մեծամորի քաղաքապետարանի, բավարարել.

Ոչ իրավաչափ ճանաչել Մեծամորի քաղաքապետարանի անգործությունը՝ կապված «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 31.10.2014 թվականի թիվ 227-1 հարցմանը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում պատասխան տրամադրելուն։

Մեծամորի քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար։

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան։ Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին։

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

_____ -ին վճիռը մտել է օրինական ուժի մեջ։

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ